

ՌՈՒՍՈՅ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԲՆԵՐԵՐԸ

Ռուսոյ մէջ մշակելի երկիրք շատ անհաւասար կերպով բաժնուած են. այդ տեղերածուալ ինքնակալութեան հիւսիսային ու արեւելեան-հիւսիսային կուսակալութիւնքն շատ ողորմելի են յայսմ մասին. բայց որչափ աւելի դէպ 'ի հարաւ իջնանք, այնչափ կ'աւելնան մշակելի երկիրք և կը տեսնուի կանաչութիւն ու կենդանութիւն:

Ամենէն աւելի մշակելի գետին ունեցող երկիրներն են՝ Տարիա, Եքսթերնոսլաւ, Սարադով, Քերսոն, Պեսասրապիա, Իերմ, Սամարա, Օրէնպուրկ, Դուեր, Վորոնէժ, Ատտերխան և Տոն: Այս տասուերկու կու-

սակալութիւնք կը բովանդակեն Եւրոպոյոյ Ռուսաստանի մշակելի երկիրներէն երեքէն երկուքը, 'ի բաց հանելով զԵհաստան և ՉՖինլանտիա, և ունին բազմաթիւ կենդանիներ՝ կարևոր հետեւութիւն մարգաց շատութեան. և տեղաբնակ երկրագործ բնակչաց չորրորդ մասին երեքն տուած է ինքն զինքը ընտանի կենդանիներ դարմանելու:

Ռուսոյ վերջին աշխարհահամարը բոլոր ինքնակալութեան սահմանաց մէջ այսչափ ընտանի կենդանեաց բազմութիւն կը համրէ:

Ազգ ձիոյ	18,723,000
Ազգ արջառոյ	27,473,000
Ազգ խոզի	40,254,030
Ազգ ոչխարի	} սովորական տեսակ . 42,804,000 մերինոս 44,642,000
Այծեան	
Ուղտք	60,000
Այծեմուկնք հիւսիսի	4,000,000

Ուղտք առաւելապէս 'ի Միսսորիա և 'ի կովկաս կը գտնուի, իսկ հիւսիսային այճը Եւրոպոյոյ Ռուսաստանի հիւսիսակողմը և 'ի Միսսորիա. և միւս տեսակ ընտանի կենդանիներն Եւրոպոյոյ Ռուսաստանի ամեն կողմերը:

Ռուսոյ ժողովուրդը ոչ կը ջնանայ իր մարգերը լացընել, և ոչ ալ ընտանի կենդանիները դարմանելու արուեստը կատարելագործել: Կենդանիք կ'արածուին ամեն կողմ ազատարար և առանց հսկողութեան, անխտիր ամեն խոտ կ'ուտեն, և գրեթէ տարւոյն մեծագոյն մասը և երբեմն ամբողջ տարին ալ գիւղերները բացօթեայ կանցընեն անպատասպար: Այս պատճառաւ շատ անգամ նիւնար ու աճև կ'ըլլան, և ծննդագործութիւններն ալ անկանոն ու անխնամ կը կատարուին: Կենդանեաց չի լաւնջընու գլխաւոր պատճառաց մէկն ալ արուեստական մարգաց բազորակ պակասութիւնն է. չունին առուոյտ և ոչ ուրիշ տեսակ օգտակար խոտեր, որոնք սննդարար և առողջարար են կենդանեաց:

Բայց ասոր հակառակ՝ քաջ են Ռուսք ձիադարմանութեան մէջ, որք են և պիտի ըլլան միշտ լաւ հեծեալք: Չիտալարութիւնն որ քրօսանաց ու պերճանաց բան մ'եղած է արևմտեան Եւրոպոյոյ մէջ, անհրաժեշտ պէտք մ'է այդ լայնածուալ ինքնակալութեան սահմանաց մէջ, ուր կամ ճամբայ չի գտնուիր և կամ բոլորովին անհարթք են: — Ռուսաստան շատ տեսակ ձիեր ունի, բայց գլխաւոր երեք տեսակի կը բաժնուին. տափարակի ձի՝ որ աւելի հարաւային կողմեր կը գտնուի, 'ի խաղախ և 'ի կովկաս, որ փոքրամարմին է և ոչ այնչափ ընտիր, բայց ժիր և տեւող աշխատութեան: Երկրորդ տեսակն հիւսիսակողմանն է, որ գրեթէ մի և նոյն յատկութիւններն ունի. իսկ երրորդն՝ կենդրոնական աշխարհաց տեսակն՝ որ կը տարբերի միւսերէն մարմնոյն մեծութեամբը, զեղեցիկ գնացիւքը որ այս ցեղերն խառնուեցան արաբական ու անգղիական ցեղից հետ, և այդ խառնուրդէն յառաջ եկաւ ընդոստ արշա-

ւող երկվարաց ցեղն, որոց ընտիր տեսակներն ներկայացան վերջին Աշխարհահանգիսից մէջ 'ի զարմանս ամենեցուն, Տէրութիւնը մեծ ջանք բրած է լուցընելու իր ձիոց տեսակները, և կայ այսօր Եւրոպիոց Ռուստտանի մէջ առանձին և հասարակաց 2300 ասպատան ծննդեան ձիոյ, Աւելի համբաւաւորքն կը գտնուին 'ի Դամպով, 'ի Վորոնէժ, 'ի Քուրսք, 'ի Նիժնի-Նովորոտ, յՍրէլ, 'ի Ռիազան, 'ի Բոլգովա, 'ի Դուլա, և 'ի Մոսկուա:

Արջառոց տեսակներն շատ են ինքնակալութեան հիւսիսային ու արևմտեան հիւսիսային կուսակալութեանց մէջ, բայց համեմատութեամբ աւելի են թուով հարաւային կողմերը՝ համեմատելով հինդանեայ թիւը երկրին տարածութեան հետ: Հետագայ ցուցակը կը բովանդակէ այն տասուերկու կուսակալութեանց արջառոց թիւը, որոց մարգագետինքն շատ են:

	Հեկտար մարգաց	Թիւ արջառոց
Կողմանք Տոնի . . .	9,680,000	1,062,000
Բերմ . . .	3,868,000	792,000
Սարազով . . .	3,630,000	479,000
Եբաթիւրիստալա . . .	3,209,000	740,000
Տաւրիա . . .	3,080,000	339,000
Սամարա . . .	2,912,800	467,000
Քերսոն . . .	2,971,900	376,000
Օրէնպուրդ . . .	2,719,100	607,000
Դուեր . . .	1,416,800	443,000
Վորոնէժ . . .	1,232,000	727,000
Պեսսարապիա . . .	1,210,000	343,000
Աժտէրխան . . .	1,078,000	533,000
Գումարն	37,007,600	7,112,000

Այս տասուերկու կուսակալութիւնքն կը բովանդակեն Ռուսիոյ բոլոր մարգաց երեքին երկուրը: Ի Տոն, 'ի Տաւրիա և Սարազովի կուսակալութեան մէջ 100 Հեկտար մարգաց վրայ 10 կամ 13 կենդանի կը համրուի: Այս համեմատութիւնը կը բազմակատի ուրիշ կուսակալութեանց մէջ, 'ի Պեսսարապիա կը համրուի 30 և յԱժտէրխան 50: Առանկենք հօս այն կուսակալութիւնները՝ ուր արջառոց թիւը երկրին համեմատութեամբ շատ է:

	Հեկտար մարգաց	Թիւ արջառոց
Վիդէպար . . .	189,700	393,500
Վեսալքա . . .	596,200	788,700
Քուրզոմա . . .	336,600	423,600
Օլոնէց . . .	96,800	106,000
Գուրլանտիա . . .	421,300	448,300
Քիէէ . . .	514,800	531,400
Բարով . . .	332,000	355,000
Մոհիլել . . .	370,700	366,000
Քուրսք . . .	433,600	426,500
Քուվոյ . . .	544,500	507,000
Գումարն	3,838,200	4,345,800

Առաջին ցուցակին մէջ գտնուած կուսակալութեանց և ոչ մին կը գտնուի ասոր մէջ, և մեծ է միջերկրի եղած տարբերութիւնը. վասն զի մինչդեռ առաջինքն ընդարձակ մարզեր ունենալով՝ միջին հաշուով 19 արջառ միայն կը սնուցանեն ամեն 100 Հեկտար տարածութեան վրայ, երկրորդքն աւելի քիչ մարգագետնով՝ միջին հաշուով 113 արջառ կը սնուցանեն ամեն 100 Հեկտարի վրայ: Ռուսի հարաւային կուսակալութիւնք ջանալու են ընդարձակելու իրենց անասնակալութեան տապալէզը, որով վաստակաւոր կ'իլլան. առ որ չի պակասիր միջոց. Մոսկուայի, Պետրոպոլիի և կենդրոնական ու հիւսիսային Ռուսիոյ քաղաքաց մեծագոյն մասին իրենք կրնան միս մատակարարել, ու վաճառականութեամբ ուրիշ կողմեր զրկել:

Բայց հարաւային կողմանց անասնադամանութիւնն ունի և պիտի ունենայ գուցէ տակաւին ընդ երկար՝ ծանր արգելք մը 'ի զարգացումն, որ է արջառոց ժանտախտն, ապականաւոր հիւանդութիւն, որուն սկիզբը տակաւին անծանօթ է, բայց թուի թէ Ասիայէն եկած ըլլայ, և մեծ կտորած կ'ընէ մեծատարած դաշտավայրին վրայ, որ յարեւելից ունի սահման Ռուս լեռները, յարեւմտից զԳերմանիա և զԱւստրիա, 'ի հարաւոյ Սև ու Ազովու ծովերը և կովկաս լեռները, և 'ի հիւսիսոյ Տոն գետը, Բայց ժանտախտն երբեմն զուրս կ'իլլայ այս սահմանէն ալ, և կը յարձակի աւելի կամ նուազ թափով արևմտեան Եւրոպիոյ ցամաքին վրայ. անոր համար Աւստրիա ու Գերմանիա պէտք է շարունակ արթուն կե-

նան ու Հսկին իրենց սահմանադիրին վը-
րայ:

Հարաւային Ռուսիա շարունակ վաճա-
ռականութիւն կ'ընէ արջառոց՝ Աստորոյ,
Լեհաստանի, Գերմանիոյ և նոյն իսկ Անգ-
ղիոյ Հետ՝ Պաշտիկ ծովուն նաւահանգիստ-
ներէն:

Ռուսիա Ե՛ն միլիոն ոչխար կը համրէ
հանդերձ իր ամենայն տեսակներովը-
բայց ասոնք ևս արջառոց նման սննդաւ-
ասար կերպով բաժնուած են երկրին մէջ:
Ոչխարի տեսակոց կենդրոնատեղիքն են՝
Բոլղոճիա, Խարթով, Քերսոն, Եթաթերի-
նոսյաւ, Պեսսարապիա, Տարիաւ կը զը-
նուին դարձեալ առատութեամբ՝ Սարաղո-
վի, Ամարայի ու Աժտերիանի կուսակա-
լութեանց մէջ: Այս վերջոցս մէջ աւելի
տիրոջն ստուարագմակ տեսակն է, որ
կու տայ առատ ճարպ, թէ և միւր քիչ է և
բուրդն խոշոր:

Մեծ բազմութիւն մը գործաւորաց կը
պարապին ասուէ, ձարէ, կաշիէ գործու-
ծոց. և գործարանաց մեծազոյն մասը կը
գանուին երևելի քաղաքաց քովերը: Եւ-
րամադարմանութիւնն մեծաքայլ յառաջա-
դիմեց երբ թթենոյ մշակութիւնն տարա-
ծուցեալ Բոլղաճիայի ու Քերսոնի կուսա-
կալութեանց մէջ և 'ի Տարիաւ, Եերա-
մի արդեանց տարեկան գինը կը հաշուի
17,600,000 Ֆրանքաց:

Մեղուաց դարմանն ևս շատ ծաղկեցաւ
կենդրոնական կուսակալութեանց ոմանց
մէջ և արևելեան կողմը: Բոլղաճիայի ու
Եթաթերինոսյաւի կուսակալութեանց ա-
մեն մէկն ունին 400,000 կամ 500,000 Վե-
թակ: Գործաւորաց ու երկրագործաց դա-
ստն ուտելիաց մէկ բանն ալ մեղրն է:
Մեղրամոմի շինութիւնն շատ տարածուած
է կենդրոնական կուսակալութեանց մէջ:

Որսորդութիւնն ու ձկնորսութիւնն ալ
երկու մասնական արուեստներ են որ ան-
ուղղապէս կը միանան երկրագործութեան
հետ, բայց շատ կ'օգնեն ներքին վաճառա-
կանութեան բարգաւաճանաց: Արիանկե-
լի, Ունէյցի, Նովկորոտի, Պետրոպոլրկի
կուսակալութեանց մէջ որսորդութիւնն
վաճառականութեան զլիաւոր աղբիւրն է:

րէն մէկն է: Բայց մորթի համար մնտը-
ռուած կենդանեաց որսորդութիւնն ծաղ-
կած է առաւելապէս 'ի Սիպերիա:

Ձկնորսութեան գալով՝ Ռուսիա առատ
ձուկ կ'որոսայ կասպից ու Սպիտակ ծովուց
ափունքը: Ձկնորսութեան տարեկան ար-
դեանց միջին գինն 'ի Սպիտակ ծով և 'ի
Սառուցեալ Ովկիանոս, մէկ միլիոն ուու-
պի է, առատ գտնուողն տառեխ ձուկն է:
Փոկի որսն կը բերէ տարին 1,300,000 քի-
լոկրամ՝ իւղ, որուն գինն է 500,000 Ֆր.:
Կասպից ծովափը, և մասնաւորապէս Աժ-
տերիանի կուսակալութեան մէջ ձկնոր-
սութիւնն շատ ծաղկած է: 3400 քառակու-
սի շէրամեղր տարածութեան վրայ,
Կասպից ծովն գուցէ աւելի ձուկ կը մա-
տակարարէ քան ուրիշ ինչ և է ծով նոյն-
չափ տարածութեամբ: Ընդարձակ տեղ-
դայքն զորս կը ձևացնեն Վոլկա և Ուրալ
գետերն իրենց բերնոյն վրայ՝ կ'ընծայեն
ձկանց հանգարտ բնակարան և առատ ճա-
րակ: Կասպից ծովուն մէջ առատ գըտ-
նուող և յարգի ձուկն Թառապին է (մէր-
սին):

Արեւոյ կենդանեաց տարեկան արդիւնքն
այս է.

Միս	448,000,000 Ֆր.
Ճարպ	114,800,000 »
Մորթ	80,000,000 »
Բուրդ	96,000,000 »
Մաշ, խորի, եղջիւր և այլն	24,000,000 »
Եերամ	17,600,000 »
Մեղր	15,200,000 »
Որսորդութիւն	4,000,000 »
Ձկնորսութիւն	94,000,000 »

Գումարն 893,600,000 Ֆր.

Այս գումարին վրայ թէ որ աւելցնելու
ըլլանք 4,281,400,000 Ֆրանքն ալ, զոր կը
բերեն անտառքն ու երկրագործութիւնն, կը
հասնի բոլորն 6 միլիարտ և 145 միլիոն
Ֆրանքաց. ամբողջական գին բուսական ու
կենդանական արդեանց 'ի Ռուսիա: Այս
գումարէն զուրս է հանքաց ու ճարտար-
արուեստից արդիւնքն, զորոնք Թուենք հօս
համաբաւիւ:

Բուժք սակւոյ . . .	76,000,000	Փրանք
» արծաթոյ . . .	3,400,000	»
» կապարոյ . . .	580,000	»
» պղնձոյ . . .	40,400,000	»
» զնկոյ . . .	2,100,000	»
» երկաթոյ . . .	60,000,000	»
» հանքածխոյ . . .	2,000,900	»
ԱՅ . . .	46,800,000	»
Գումարն 171,280,000		Փրանք

Կան ընտանիւնի հանքեր ալ, բայց շատ խեղճ են առ այժմ:

Ռեբանն Ռուսիոյ բուսական ու կենդանական բերքերն երեսուն անգամ աւելին քան գՀանքայինս, և իրեն հարստութեան զխաւոր աղբիւրը անոնց բարգաւաճանաց մէջ է: Երկրագործութեամբ կրնայ կրկնապատկիլ իր հարստութիւնը. բայց առ այդ հասնելու համար հարկ է որ երկրագործական գիտութեան օրէնքներն ընդհանրապէս երկրին մէջ: Ռուսիա ունի այսօր կարգաւորեալ տասը զպրոց երկրագործական ուսմանց, մինչդեռ չորս հինգ անգամ աւելի պէտք էր ունենար, հետեւելով Աւստրիոյ ու Գերմանիոյ օրինակին:

Չ Ա Ն Ա Չ Ա Ն Գ Ի Տ Տ Լ Ի Ք

Արտնատական կարագ. — Առ եզան ճարպը որ զալար ըլլայ ըստ կարելոյն, և ատամնաւոր գլանի մը մէջ փշրելէք ետքը՝ ձգէ ամանի մը մէջ որ բովանդակէ բընածխատ կալւոյ և զալար քաղրթի կտորուանք մանր ջարդած, տարով ամանին 45 աստիճանի ջերմութիւն, Զերմութեան ազդեցութեամբ ու հալմամբ քաղրթաց՝ ճարպը կը լուծուի իր մաշկեղէն պատեանէն և վեր կու գայ: Այն ատեն թափէ մեղմով ՚ի մի ամանէ ՚ի միւս աման և թող որ պաղի, և ապա կտաւի մէջ առ:

Այս կերպով ճարպը բուսականապէս մաքրելէք ետքը, հոսեցուր ասկառի մէջ, ուր կը պահուի երկար ժամանակ առանց ապականելու ու դառնանալու, և կրնաս գործածել առանց վնասուելու:

Այս նորարուեստ կարագը այսօրժահամ է և հաւասար սովորական տեսակին գործածելի ՚ի կերակուրս: Գաղղիոյ բժշկութեան Մասնաժողովն քննեց զայն, և գտաւ որ չէր վնասակար առողջութեան:

Անագի վրայ նկարչութիւն. — Պ. Գրանիէլ

նոր տեսակ նկարչութիւն մը կ'առաջարկէ, այն է փոխանակ փայտի, կտաւի կամ մետաղի վրայ նկարելու, անագի թիթղան վրայ նկարել:

Պատրաստելու համար այն երեսը որ պիտի ընդունի զնկարը, առ ամենանուրբ անագէ թիթղ մը, և պարզէ զայն հոյնուլոյ մը կամ ապակոյ վրայ, սրբակելով նախ ապակոյն վրայ քիչ մը ջուր, մետաղական թիթղան ապակոյն վրայ տարածումը դիւրացնելու համար: Երբ թիթղան երեսը ամենողորկ ձև մ'առնու, դրոշմէ վրան իւղաներկ պատկերդ, այնպիսի գիւրութեամբ որպէս թէ փայտի կամ կտաւի վրայ ըլլար: Ապա թող նկարը որ չորնայ և ետքը օժէ ջնարակաւ: Եւ երբ վերջընես ապակոյն վրայէն սնանգի այդ նկարտագրեալ թիթղը, կրնաս փաթութել զայն իբրև զկտաւ և տանիլ ո՛ր որ կ'ուզես:

Բայց Չինացիք, կ'ըսէ Պ. Տիւմա, արդէն ՚ի վաղուց կը գործածէին զանագ և ուրիշ մետաղները ՚ի զանազան պէտս, ուստի կրնայ գիտաւ նոր ըլլալ ոչ բոլոր աշխարհի այլ Եւրոպիոյ համար միայն: